ԼԻԼԻԹ ՂԱԶԱՐՅԱՆ
Վիճակագրություն, բակալավրիատ,
2-րդ կուրս

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԴԻՐՔԵՐԻ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՆԵՐՔՈ

Հիմնաբառեր. *մրցունակություն, տնտեսական աճ, արտադրողականություն, պետական պարտք, արտաքին հատված, ռեգրեսիոն վերլուծություն*

Հոդվածում ուսումնասիրվում են վերջին տարիներին միջազգային շուկայում Հայաստանի Հանրապետության մրցակցային դիրքերի տեղաշարժերը՝ պայմանավորված մակրոտնտեսական հետևյալ ցուցանիշներով՝ տնտեսական աճ, արտադրողականություն, արտաքին հատված, պետական պարտք: Նշված ցուցանիշների ազդեցությունը ՀՀ տնտեսության մրցունակության և մրցակցային դիրքերի վրա քանակապես գնահատելու համար իրականացվել է նաև ռեգրեսիոն վերլուծություն, ինչը հնարավորություն է տվել կառուցելու ՀՀ՝ Համաշխարհային մրցունակության ցուցիչի տեղաշարժը բնորոշող մոդել:

Ներածություն: Միջազգային տնտեսական հարաբերությունների ժամանակակից փուլում յուրաքանչյուր պետության համար լուրջ հիմնախնդիր է ազգային տնտեսության մրցունակության ապահովումը, որը բնութագրում է տնտեսական համակարգի զարգացման մակարդակը և պայմանավորում երկրի դիրքը միջազգային շուկայում: Վերջին քառորդ դարի ընթացքում համաշխարհային տնտեսությունում տեղի ունեցած փոփոխություններն ուժեղացրել են մրցակցությունը զարգացող երկրների ներքին և արտաքին շուկաներում:

Անշուշտ, տնտեսության մրցունակության ապահովումը յուրաքանչյուր երկրի կայուն զարգացման անհրաժեշտ և կարևոր նախադրյալներից մեկն է, որից ուղղակիորեն ու մեծապես կախված է տնտեսական համակարգի բնականոն գործունեությունը: Ակնհայտ է նաև այն փաստը, որ մրցակցային առավելությունների բացահայտումը և դրանց արդյունավետ օգտագործումը կարող են էականորեն նպաստել համաշխարհային շուկայում առաջավոր դիրքերի ապահովմանը և, դրանով իսկ, միջազգային տնտեսական հարաբերությունների խորացմանը: Ներկայում հանրապետության տնտեսությունը, մրցակցային տեսանկյունից, դեռևս հեռու է ցանկալի մակարդակից, ինչը որոշակի դժվարություններ է ստեղծում արտաքին տնտեսական հարաբերությունների արդյունավետ զարգացման համար: Մրցունակության բարձրացման խնդիրների լուծման կարևորությունը պայմանավորված է հանրապետությունում տնտեսական գործունեության ընթացիկ փուլի առանձնահատկություններով, որոնք պահանջում են մրցակցային առավելությունների և զարգացման ուղիների բացահայտում:

Երկրի մրցունակության և մրցակցային դիրքերի վրա ազդում են բազմաթիվ գործոններ, սակայն այս աշխատանքում, չանտեսելով մյուս գործոնների ազդեցությունները, անդրադարձ է կատարվել մակրոտնտեսական մի-

ջավայրի զարգացումներին, քանի որ մակրոտնտեսական զարգացումը համարվում է ցանկացած տնտեսության կայուն աճի և զարգացման անհրաժեշտ հիմքերից մեկը համաշխարհային և տարածաշրջանային զարգացումների համատեքստում:

Հետազոտության նպատակն է գնահատել ՀՀ մակրոմիջավայրի զարգացումների ազդեցությունը ՀՀ մրցունակության և մրցակցային դիրքերի վրա: Ելնելով նպատակից՝ հետազոտության մեջ, որպես խնդիրներ, կարևորվել են ՀՀ տնտեսության վերջին տարիների մակրոտնտեսական զարգացումների և դրանց ազդեցությունների վերլուծությունը 2008-2018 թթ., արդյունքների մեկնաբանումը:

Տնտեսական աճ:

Ներկայում աշխարհի գրեթե բոլոր երկրների տնտեսական քաղաքականության անկյունաքարն է տնտեսական աճի խթանումը, վերջինիս տեմպերի կայուն և օպտիմալ մակարդակի ապահովումը: 2000-ական թթ.-ին Հայաստանի ՀՆԱ-ն աճում էր միջինը 12%-ով: Սակայն, 2009 թ.-ի համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքով Հայաստանի իրական ՀՆԱ-ն նվազեց 14.1%-ով, ինչը տարածաշրջանային և համաշխարհային մակարդակով ամենամեծ անկումն էր (գծապատկեր 1): Դա բացատրվում էր բազմաթիվ հանգամանքներով, որոնցից առանձնացնենք այն, որ աճի աղբյուրները խոցելի էին և չէին ստեղծում միջազգային մրցունակության հիմքեր: Այլ կերպ ասած, ՀՀ տնտեսությունը քանակական դաշտում գրանցում էր բավական լուրջ արդյունքներ, իսկ որակական իմաստով, ունենալով լուրջ խնդիրներ, չդիմակայեց ճգնաժամին և ունեցավ նկատելի և խոր անկում:

Գծապատկեր 1. ***Տնտեսական աճի շարժընթացը*** *1996-2018* ***թթ.-ին***[1]

Հետճգնաժամային շրջանում ՀՀ տնտեսությունը սկսեց դանդաղորեն վերականգնվել: 2011-2012 թթ.-ին տնտեսական աճի տեմպերն արագացան՝ կազմելով համապատասխանաբար՝ 4.7% և 7.2%, սակայն դրանք դեռևս բավարար չէին 2008 թ.-ի տնտեսական ակտիվության մակարդակին հասնելու

[1] Գծապատկերը կազմել է հեղինակը՝ Համաշխարհային բանկի «Համաշխարհային զարգացման ցուցանիշներ» (World Development Indicators) տվյալների բազայի հիման վրա:

համար: Միաժամանակ, 2012 թ.-ին 2011 թ.-ի համեմատությամբ դրամն արժեզրկվեց շուրջ 8% (ավելի, քան իրական տնտեսական աճը), ինչի հետևանքով ԱՄՆ դոլարով արտահայտված ՀՆԱ-ն 2011 թ.-ի շուրջ 10.2 մլրդ դոլարից 2012 թ.-ին նվազեց մինչև 9.9 մլրդ դոլար: 2013 թ.-ից իրական ՀՆԱ աճի տեմպերը կրկին դանդաղել են՝ 2016 թ.-ին կազմելով 0.2%: 2018 թ.-ին Հայաստանում արձանագրվել է 5.2% տնտեսական աճ, որը, սակայն, 2.3 տոկոսային կետով զիջում է նախորդ տարվա ցուցանիշը (տե՛ս գծապատկեր 1):

Արտադրողական դիրք:

Մրցունակության ապահովման գործում առանցքային դեր է խաղում արտադրողականության բարձրացումը: Վերջին 15 տարիների ընթացքում շուրջ 9%-ով կրճատվել է ՀՀ տնտեսությունում զբաղվածների թվաքանակը, սակայն այս տարիներին՝ բացառությամբ 2009 թ., տնտեսության անկում չի արձանագրվել, ինչը վկայում է, որ տնտեսությունում տեղի է ունեցել արտադրողականության աճ: ՀՀ տնտեսության արտադրողականությունը 2008-2018 թթ. աճել է շուրջ 2 անգամ, որի արդյունքում 2018 թ.-ին տնտեսության մեկ զբաղվածն ապահովել է տարեկան 4.94 մլն դրամի ավելացված արժեք:

Արտադրողականության այսպիսի բարձր աճը կարող է բացատրվել երկու հիմնական գործոններով.

- տեխնոլոգիաների արդիականացմամբ, կառավարման կարողությունների, հմտությունների կատարելագործմամբ պայմանավորված՝ արտադրողականության իրական աճով,
- տնտեսության ոչ ֆորմալ հատվածի կրճատմամբ. Հայաստանում ոչ ֆորմալ տնտեսությունը հիմնականում վերաբերում է այն դեպքերին, երբ չի գրանցվում գործունեությունը կամ վաճառքի իրական ծավալի փոխարեն ավելի ցածր ցուցանիշ է ներկայացվում: Առավել քիչ են հանդիպում այն դեպքերը, երբ չեն գրանցվում աշխատողները (առավել տարածված տարբերակն աշխատակիցների իրական աշխատավարձերը թաքցնելն է): Նույնիսկ եթե պաշտոնական վիճակագրությունը ներառում է ստվերային շրջանառության որոշակի հատված, այդուհանդերձ, չգրանցված գործունեության ծավալը դեռևս բավական մեծ է: Արդյունքում ֆորմալ տնտեսության ընդլայնումը հանգեցրել է մեկ աշխատողի հաշվով գրանցվող թողարկման ծավալների մեծացմանը:

Թեև արձանագրված դրական միտումներին, աշխատանքի արտադրողականության մակարդակով ՀՀ-ն դեռևս զգալիորեն զիջում է եվրոպական և տնտեսապես զարգացած այլ երկրներին: Հիմք ընդունելով Համաշխարհային բանկի տվյալները՝ կարող ենք վկայել, որ Հայաստանի տնտեսության արդյունավետությունն աշխարհում ամենացածրերից է: Եթե ՀՀ-ում մեկ զբաղվածին ընկնող ՀՆԱ-ն 2018 թ. կազմել է 22972 ԱՄՆ դոլար (ըստ գնողունակության պարիտետի և հաստատուն գների, միջազգային դոլար, 2011), ապա ԱՄՆ-ում՝ 115 հազ. դոլար, Ռուսաստանում՝ 51 հազ. դոլար, ԵՄ երկրներում այն գտնվում է 82 հազ., իսկ Կենտրոնական Եվրոպայի և Բալթյան երկրներում՝ 56 հազ. ԱՄՆ դոլարի սահմաններում: Նշված ցուցանիշով Հայաստանը հարևան երկրներից գերազանցում է միայն Վրաստանին, որտեղ մեկ աշխատողը տարեկան արտադրում է 20083 ԱՄՆ դոլար ՀՆԱ[1]: Հետևա-

[1] Աղբյուրը՝ https://data.worldbank.org/indicator/SL.GDP.PCAP.EM.KD

բար՝ աշխատանքի արտադրողականության մեծացումն առանցքային նշանակություն ունի ՀՀ տնտեսության զարգացման և մրցունակության մակարդակի բարձրացման հարցերում:

Արտաքին հատված:

Հայտնի է, որ ՀՀ անկախացման տարիներից սկսած, ՀՀ տնտեսության կարևորագույն խնդիրներից են արտահանման խթանումը, բազմազանեցումը և արտաքին առևտրի բացասական հաշվեկշռի կրճատումը: Հարկ է նշել, որ թեպետ այս խնդիրները միշտ էլ եղել են ՀՀ կառավարության ուշադ-ության կենտրոնում, սակայն այդպես էլ արդյունավետ լուծում չեն ստացել: Մասնավորապես՝ Հայաստանը վերջին տարիներին աննշան մասնակցություն է ունեցել միջազգային առևտրին, արտահանումը չի աճել տնտեսական աճին զուգընթաց, ներմուծումն արտահանման համեմատ ունեցել է առաջանցիկ տեմպեր, արտաքին առևտրային հաշվեկշռի բացասական հաշվեմնացորդը պարբերաբար մեծացել է, ինչը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության՝ գլոբալ շուկայում ցածր գրավչությամբ, տրանսպորտային հաղորդակցության խնդիրներով, տնտեսության փոքր ծավալով, արտահանումը խթանելու ծրագրերի ոչ բավարար արդյունավետությամբ և օբյեկտիվ ու սուբյեկտիվ այլ պատճառներով:

Աղյուսակ 1

ՀՀ արտաքին առևտրի ցուցանիշները 2008–2018 թթ.-ին[1]

	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018
1. Արտահանման ֆիզիկական ծավալներ (մլն ԱՄՆ դոլար)	1060.3	768.2	1019.1	1337	1361	1478.7	1547.3	1485.3	1791.7	2237.7	2412.2
2. Արտահանման շարժընթաց (%)	-8.4	-27.5	32.6	31.2	1.8	8.6	4.6	-4	20.6	24.9	7.8
3. Ներմուծման ֆիզ. ծավալներ (մլն ԱՄՆ դոլար)	4471	3318.3	3790.5	4155	4284	4385.9	4424.4	3239.2	3273.5	4097.1	4975.5
4. Ներմուծման շարժընթաց (%)	36.2	-25.7	14.2	9.6	3.1	2.3	0.9	-26.8	1.1	25.2	21.4
5. Արտաքին առևտրային հաշվեկշռի հաշվեմնացորդ (մլն ԱՄՆ դոլար)	-3410.7	-2550.1	-2771.4	-2818	-2923	-2907.2	-2877.1	-1753.9	-1481.8	-1859.4	-2563.3
6. Արտահանման բացասական մնացորդի աճի շարժընթաց (%)	60.5	-32.7	8.7	1.7	3.7	-0.6	-1.03	-39.04	-15.51	25.5	37.9
7. ՀՆԱ ծավալներ (մլն ԱՄՆ դոլար)	11917	8714.2	9432	10135	10674	11121.3	11609.5	10553.3	10572.3	11536.5	12433.1
8. ՀՆԱ ծավալների շարժընթաց (%)	29.8	-26.9	8.2	7.5	5.3	4.2	4.4	-9.1	0.2	9.1	7.8
9. Արտահանում/ՀՆԱ (%)	14.7	8.8	10.8	13.2	12.8	13.2	13.3	14.1	16.9	19.4	19.4
10.Ներմուծում/ՀՆԱ (%)	39.8	38.1	40.2	41	40.1	39.4	38.1	30.7	31	35.5	40.0
11. ԱՄՆ դոլարի հաշվարկային փոխարժեք	306	363	367.3	372	373	408.5	417.6	476.7	480.5	482.7	483.0

[1] Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ տվյալների բազաներ:

Աղյուսակ 1-ի տվյալներից երևում է, որ 2008-2018 թթ.-ին ՀՆԱ-ում ներմուծման բաժինը (միջինում՝ 37.6%) ավելի քան 2.6 անգամ գերազանցել է արտահանման բաժինը (միջինում՝ 14.2%):

Այստեղից հնարավոր է եզրակացնել, որ դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ-ն կարելի է բնութագրել որպես ներմուծմանն ուղղված տնտեսություն ունեցող երկիր: Ճգնաժամային ժամանակահատվածում արտահանումն ու ներմուծումը գրեթե հավասարապես անկում են արձանագրել (համապատասխանաբար՝ -27.5% և -25.7%), իսկ հետճգնաժամային ժամանակահատվածի վերականգնողական աճի մեջ արդեն նկատելի են որակական որոշ փոփոխություններ: Մասնավորապես՝ 2010–2018 թթ.-ին արտահանման միջին աճը (14.3%) ավելի քան 5 անգամ գերազանցել է ներմուծման միջին աճը (2.7%), ինչի հետևանքով արտաքին առևտրի բացասական մնացորդի միջին աճը եղել է ընդամենը -4%:

Միաժամանակ, ՀՀ տնտեսության բացության գործակիցը շարունակել է աճել՝ 2010-2018 թթ.-ին հիմնականում դրսևորելով ներմուծման մեծացման միտումներ: Մասնավորապես՝ արտահանման բաժինը ՀՆԱ-ում մինչև ճգնաժամը կրճատվել է՝ հասնելով 8.8%, իսկ հետճգնաժամային տարիներին կրկնակի աճել է՝ 2018 թ.-ին կազմելով 19.4%: Ինչ վերաբերում է ներմուծում/ՀՆԱ հարաբերակցությանը, ապա դիտարկվող ժամանակահատվածում այն գրեթե կայուն է, և միջինը կազմում է 37%:

Պետական պարտք:

ՀՀ մրցակցային դիրքերի տեսանկյունից, բացասական երևույթ է ՀՀ արտաքին պետական պարտքի աճող միտումը, որը պայմանավորված էր հակաճգնաժամային միջոցառումների իրականացման անհրաժեշտ ռեսուրսների սակավությամբ:

2000-ականներից մինչ համաշխարհային տնտեսական ճգնաժամն ընկած ժամանակահատվածը Հայաստանի արտաքին պետական պարտքը թեև աճ էր գրանցում, սակայն վերջինիս հարաբերակցությունը ՀՆԱ-ին նվազման միտում ուներ՝ պայմանավորված երկրի տնտեսական արագ աճի տեմպով: Այսպիսով՝ 2000-2008 թթ.-ին արտաքին պետական պարտքի միջին տարեկան աճի տեմպը կազմել է 14.8%, մինչդեռ պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը նվազել է մեկ երրորդով:

Գծապատկեր 2. ***ՀՀ արտաքին պարտքի շարժընթացը*** *2000-2018* ***թթ.-ին*** [1]

[1] Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ տվյալներ:

Վերջին տարիներին թեև արտաքին պետական պարտքի գերակշիռ մասը կազմում են միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից արտոնյալ պայմաններով տրված ֆինանսական ռեսուրսները, պարտքի մակարդակը կայուն կերպով մոտենում է պաշտոնապես սահմանված առավելագույն վերին սահմանագծին (պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցության վերին շեմը սահմանված է 60%): Եթե 2008 թ.-ին պետական պարտքի մեծությունը ՀՆԱ-ի նկատմամբ կազմում էր 13.6%, արդեն 2009 թ.-ին այն հասավ 35.7%-ի: 2017 թ.-ին պետական պարտքի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ կազմել է 58.9% դոլար, իսկ 2018 թ.-ին՝ 55.8%[1]: Այս շեմին մոտենալու դեպքում անհրաժեշտ կլինի կտրուկ միջոցառումներ ձեռնարկել, մասնավորապես՝ կրճատել հանրային ծախսերը, ինչը, սակայն, կարող է կարճ ժամկետում զգալի հարված հասցնել տնտեսությանը՝ հաշվի առնելով երկրում տիրող տնտեսական սուր իրավիճակը:

ՀՀ տնտեսության մրցակցային դիրքերի տեղաշարժերի վերլուծություն:

Ի տարբերություն բնական ռեսուրսներով հարուստ երկրների, Հայաստանը բարեկեցության ցանկալի մակարդակ ապահովելու համար պետք է գլխավորապես հիմնվի տնտեսական մրցունակության վրա:

2000-ականների մեծ մասի ընթացքում Հայաստանում արձանագրված երկնիշ տնտեսական աճը չուղեկցվեց միջազգային մակարդակով մրցունակության բարձրացմամբ, ինչի մասին վկայում են նաև Համաշխարհային մրցունակության ցուցչի (ՀՄՑ) տվյալները: Այս երևույթն ի հայտ բերեց ոչ միայն «աճ-մրցունակություն» պարադոքսը, այլև Հայաստանի տնտեսության մեջ արմատական խնդիրների առկայությունը՝ հիմնականում պայմանավորված աճի ոչ կայուն գործոններով:



Գծապատկեր 3. ***Հայաստանի ՀՆԱ աճի շարժընթացը և դիրքը՝ ըստ Համաշխարհային մրցունակության ցուցչի*** *2005-2018* ***թթ.-ին***[2]

Հետճգնաժամային շրջանում Հայաստանի ՀՆԱ վերականգնումն ուղեկցվել է Համաշխարհային մրցունակության ցուցչում ավելի բարձր դիրքով՝ մատնանշելով ինստիտուտների բարելավված որակը և արտադրողականու-

[1] Տե՛ս «Պետական պարտք» հաշվետվություն (2018), ՀՀ ֆինանսների նախարարություն:
[2] Աղբյուրը՝ ՀԲ ՀՋՑ https://data.worldbank.org/indicator

թյան դրական միտումները: Այնուամենայնիվ, այս բարելավումը դեռևս կարողացել է միայն վերահաստատել Հայաստանի մրցունակության՝ մեկ տասնամյակ առաջ ունեցած դիրքը:

ՀՀ-ն այսօր դասվում է արդյունավետության վրա հիմնված զարգացման փուլում գտնվող երկրների թվին, որտեղ տնտեսական արդյունավետությունն ու դրանից բխող մրցունակությունը գերկարևոր են՝ ի տարբերություն զարգացման նախորդ փուլի, որի հիմնական շեշտադրումը ենթակառուցվածքների զարգացման մակարդակն էր:

ՀՀ տնտեսության մրցակցային դիրքերի տեղաշարժերը մակրոտնտեսական զարգացումների ներքո քանակապես գնահատելու նպատակով կիրառվել է ռեգրեսիոն վերլուծության մեթոդը, ինչը հնարավորություն է տվել կառուցելու բազմագործոնային մոդել, ըստ որում, որոշելով ինչպես յուրաքանչյուր գործոնի առանձին, այնպես էլ դրանց ամբողջական ազդեցությունը մոդելավորվող ցուցանիշի վրա:

Ռեգրեսիոն վերլուծության նախնական փուլը գործոնների ընտրությունն է: Որպես արդյունքային հատկանիշ՝ վերցվել է ՀՀ համաշխարհային մրցունակության ցուցչի դիրքը (Y), որի տեղաշարժը գլխավորապես բացատրվում է վերոնշյալ մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների փոփոխությամբ: Ուստի, որպես գործոնային հատկանիշներ, առանձնացվել են հետևյալ ցուցանիշները.

X_1՝ տնտեսական աճը (%),

X_2՝ արտադրողականության աճը (%),

X_3՝ արտահանման շարժընթացը (%),

X_4՝ ներմուծման շարժընթացը (%),

X_5՝ արտաքին պետական պարտքի շարժընթացը (%):

Նախապես կատարված կոռելյացիոն վերլուծության արդյունքում բացահայտվել է, որ 2008-2018 թթ.-ին ՀՀ համաշխարհային մրցունակության ցուցչի տեղաշարժը հիմնականում պայմանավորված է եղել արտադրողականության մակարդակի փոփոխությամբ՝ $r_{yx_2} = -0.82$ և տնտեսական աճի տեմպերով՝ $r_{yx_1} = -0.41$: Աննշան, բայց դրական ազդեցություն է ունեցել նաև արտահանման շարժընթացը՝ $r_{yx_3} = -0.2$, իսկ արտաքին պետական պարտքի շարժընթացի ազդեցությունը ՀՀ համաշխարհային մրցունակության ցուցչի տեղաշարժի վրա, ինչպես և սպասվում էր, եղել է հակադարձ՝ $r_{yx_5} = 0.44$:

Աղյուսակ 2

ՀՀ համաշխարհային մրցունակության ցուցչի տեղաշարժը և մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների կոռելյացիոն մատրիցը[1]

	Y	X_1	X_2	X_3	X_4	X_5
Y	1					
X_1	-0.41	1				
X_2	-0.82	0.85	1			
X_3	-0.20	0.52	0.29	1		
X_4	-0.10	0.66	0.51	0.46	1	
X_5	0.44	-0.89	-0.79	-0.58	-0.52	1

[1] Աղյուսակը կազմել է հեղինակը՝ հաշվարկների հիման վրա:

Առանձնացված գործոնների ամբողջական ազդեցությունը մոդելավորվող ցուցանիշի վրա գնահատելու նպատակով կատարված քայլային ռեգրեսիոն վերլուծության արդյունքում ստացվել է ՀՀ համաշխարհային մրցունակության ցուցչի տեղաշարժը բնորոշող մոդել, որը ներառում է միայն X_2 գործոնը.

$$\hat{Y} = 172.2 - 0.98X_2,$$

$$R^2 = 0.67:$$

Ստացված ռեգրեսիայի հավասարման արդյունքները կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ. արտադրողականության մակարդակի 1 տոկոս աճը կբերի ՀՀ համաշխարհային մրցունակության ցուցչի դիրքի բարելավման 1 կետով: Դետերմինացիայի բազմակի գործակիցը վկայում է, որ Համաշխարհային մրցունակության վարկանշային աղյուսակում ՀՀ դիրքի տատանումը 67%-ով պայմանավորված է արտադրողականության մակարդակի փոփոխությամբ:

Եզրակացություններ և առաջարկություններ:

ՀՀ տնտեսության մրցունակության վրա ազդող գործոնների վիճակագրական վերլուծությանը նվիրված սույն հոդվածը թույլ է տալիս կատարել հետևյալ եզրահանգումը. թեպետ ՀՀ-ում տնտեսական աճի, արտադրողականության և արտահանման քանակական կողմերը դեռևս շարունակում են պահպանել առաջնահերթությունը, այնուամենայնիվ, մակրոտնտեսական հավասարակշռության ապահովման հիմնախնդիրների լուծումը անհրաժեշտ է որոնել քանակական ու որակական զարգացման միասնական տիրույթում: Տնտեսական աճի արդյունքները պետք է ապահովեն զարգացման նախադրյալներ երկարաժամկետ կտրվածքում և բարձրացնեն հասարակության բարեկեցության մակարդակը:

Հոդվածում կատարված վերլուծությունների հիման վրա ձևակերպվել են հետևյալ ***առաջարկությունները***.

- Հետևողականորեն իրականացնել երկարաժամկետ կայունության ապահովմանը միտված ինստիտուցիոնալ փոփոխություններ:
- Կատարված վերլուծությունը հիմք ընդունել տնտեսության կառուցվածքային քաղաքականությունը մշակելիս՝ ուշադրության առանցքում պահելով հատկապես արտադրողականության բարձրացումը:

Գրականություն

1. Global Competitiveness Forum Report 2019.
2. Мау В., Экономический рост и постиндустриальные вызовы // Проблемы теории и практики прогнозирования. 2003, №1.
3. Гельвановский М.И., Глобализация и национальная конкурентоспособность // Экономическая теория на пороге XXI века. Глобальная экономика / под ред. Ю.М. Осипова и др. М., 2003.
4. Խուրշուդյան Հ., «Մրցունակություն» հասկացությունը և նրա տնտեսական բովանդակությունը, «21-րդ ԴԱՐ» ամսագիր, 2016 թ., 6-րդ համար:
5. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2018, ՀՀ ՎԿ, Եր., 2019:
6. Հայաստանի ազգային մրցունակության զեկույց 2019, Տնտեսություն և արժեքներ հետազոտական կենտրոն, 2019:

ЛИЛИТ КАЗАРЯН
Статистика, бакалавриат, 2-й курс

СДВИГИ В КОНКУРЕНТНОЙ ПОЗИЦИИ ЭКОНОМИКИ АРМЕНИИ В УСЛОВИЯХ МАКРОЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ

Ключевые слова: *конкурентоспособность, экономический рост, производительность, государственный долг, внешний сектор, регрессионный анализ*

В статье исследуются сдвиги в конкурентной позиции Республики Армения на международном рынке за последние годы, обусловленные следующими макроэкономическими показателями: экономический рост, производительность, внешний сектор, государственный долг. Для количественной оценки влияния этих показателей на конкурентоспособность экономики Армении был проведен регрессионный анализ, который позволил построить модель, характеризующую динамику индекса глобальной конкурентоспособности Армении.

LILIT GHAZARYAN
2nd Year, Bachelor's Degree, Statistics

CHANGES IN THE COMPETITIVE POSITION OF THE ARMENIAN ECONOMY UNDER MACROECONOMIC DEVELOPMENTS

Keywords: *competitiveness, economic growth, productivity, public debt, external sector, regression analysis*

The paper examines the changes in the competitive position of the Republic of Armenia in the international market in recent years due to the following macroeconomic indicators: economic growth, productivity, external sector, public debt. In order to quantify the impact of these indicators on the competitiveness of the Armenian economy, a regression analysis was performed, which enabled us to construct a model characterizing the movement of the Global Competitiveness Index of Armenia.